

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Русская мысль», фեнтр-
րուար.—«Միջազգային լեզու».—Քա-
նի զարգանում է անտեսական կեան-
քը, և ուժեղանում է զանազան ազ-
գերի և երկրների մըցումը, այն-
քան ակներկ է զառնում համաշաբա-
հային լեզուի անհրաժեշտութիւնը:
Այդպիսի լեզուն կարող է օրոշ գի-
րութիւններ ստեղծել միջազգային
յարաբերութիւնների մէջ, կարող է
նպաստել համամարդկային մորձեց-
ման, զարկ տալ կոլտուրայի զարգաց-
մանը՝ հեշտութեամբ տարածելով նոր
զաղափարները, գիտութեան ու զրա-
կանութեան զանազան արտադրու-
թիւնները:

Նոր չէ այդ հարցը նրանով զրա-
դուել են շատ գիտնականներ, նրա
մասին զրուած են շատ յօդուածներ
ու գրեր: Այդ աշխատութիւնների
շարքում առաջին անդամ մեծ ուշա-
զըրութիւն գրաւեց ֆրանսիացի հեղի-
նակ Գեդոզի յօդուածը, որ լրու տե-
սաւ «Annales des sciences politiques» ամսադրի 1899 թ. յուլիսի
համարում «Langues de l'Etat et
langues nationales» խորագրի տակ:

Պ. Գեդոզ քննելով ժամանակակից
միջազգային յարաբերութիւնները և
կուլտուրական կեանքը, զալիս է այն
եղանակացութեան, որ իրաքանչիւր
գիտականի այժմ անհրաժեշտ է իմա-
նալ ելքու համաշխարհային» լեզուներ՝

ֆրանսերէն, անգլիերէն և գերմաներէն
և թերևս ռուսերէն, ուսովհետև հետզ-
հետէ աւելանում են ռուսերէն լեզուով
գրուած գիտական աշխատութիւնները
Սախայի վերաբերմամբ: Ուրեմն նրա ա-
ռաջարկութիւնն է՝ զարկ տալ այդ լե-
զուների ուսումնակրութեանը և դր-
բանով դիւրացնել համաշխարհային յա-
րաբերութիւնները: Մի առաջարկու-
թիւն, որը արդէն իրազործւում է օրոշ
սահմաննելում:

Բայց այդ միջոցը այնքան դժուար
է, այնքան լայն, որ երբէք չի կարո-
ղանալ ցանկալի նպատակին հասնել,
ուստի յայտնի լեզուարան Օրէալ ան-
ցեալ տարի «Bevue de Paris»-ի էջե-
րում առաջարկեց սահմանափակել լե-
զուների թիւը և դրանով հեշտացնել
«Համաշխարհային» լեզու ստեղծելու
հարցը:

«Փրանսիայի, Անգլիայի և Միա-
ցեալ նահանգերի մէջ, ասում է նա,
հարկաւոր է կապել ոչ թէ քաղաքա-
կան կամ վաճառականական, այլ լի-
ցուարանական դաշնադրութիւն: Այդ
գաշնագրութեան հիման վրայ ֆրան-
սերէն և անգլիերէն լեզուները պար-
ապետի պէտք է զառնան այդ երեք
պետութիւնների բոլոր դպրոցներում,
այսինքն ոչ միայն համալրածաններում
ու միջնակարգ դպրոցներում, այլ և
մեծ քաղաքների տարբական դպրոց-
ներում: Այդ միջոցը իր դրական հետե-

տանքը կ'ունենար. 180 միլիոնից բաղկացած այդ ազգերի գործածական լեզուները իշխող ազգեցութիւն կը ստանային ամբողջ աշխարհում...»

Պարզ է, որ այդպիսի առաջարկութիւնները չէին կարող համակրութիւն գտնել գերմանացիների կողմէց: Դուրս թողնել գերմանական լեզուն—զա կը նշանակէ վերաւորել նրանց ազգային արժանապատութիւնը, հարուած հասցընել պետութեան փայտայած «Weltropolitik»-ին: Այս հէնց այդ պատճառով գերմանացի հեղինակներից ոմանք (օրինակ U. Diels «Das Problem der Weltsprachs»—«Deutsche Revue»ի մէջ) աւելի գերազան են համարում զուրկ մնայ համաշխարհային քաղաքակրթութեան պաւուներից, քան թէ դաւաճանել ազգասիրութեան զաղափարին՝ յստին անդը տալով մայրենի լեզուին:

Նոյն հարցի մասին գրել են նաև անգլիացիներն ու իտալացիները և ի հարկէ գրանցից իւրաքանչւրին աշխատել է ցոյց տալ, թէ իր մայրենի լեզուն է գերազանակին ու նպատակայարձաբը: Ըստ այդպիսով տառաջ է եկել ազգային մրցում՝ լեզուարանական հողի վրայ:

Այդ մըցման առաջն առներու համար ուրիշ գիտականներ (պրօֆ. Բերման, պրօֆ. Կուտափիքան և այլն) առաջարկում են մի կողմէ թողնել այս կամ այն լեզուի գերազանութեան հստացը և ըստեղծել մի ընդհանուր լեզու, որը չի ճնշի ազգային լեզուները, ձեռք չի մեկնի նրանց ինքնուրսյութեանն ու զարգացմանը, այլ յարմարեցրած կը լինի մի միջանց գիտութեան ու միջազգային յարաբերութիւնների համար:

Եյսպէս թէ այնպէս «համաշխարհային լեզուի» հարցը գարձել է ուշադրութեան ու հետաքրքրութեան տապակայ և ստեղծել է մի ամբողջ զըսկա

Վ. Լևսեվիչ «Р. М.-ի ներկայ համարում „Մеждународный языкъ культурныхъ союзеній“ յօդուածով քննութեան է աւնում այդ զըսկանու-

թիւնը, համեմատում է զանազան առաջարկութիւններ ու ծրագիրներ և զուրս ըերում հետեւալ կը ակացուցութիւնը:—

Նոր ձեռվ միջազգային լեզու բառեցելու միտքը ծագեց անցեալ 1900 թ. Դարիզի յուցահանդիսի ժամանակի Այդ միտքը մեծ հաւանութիւն գտաւ համաժողովների և գիտական ընկերութիւնների կողմէց, որոնք և ընտրեցին մի սահմանադրութիւն օժանակի միջազգային լեզու ընդունելու համար (Delegation pour l'adoption d'une langue auxiliaire internationale):—Այդ մասնաժողովը հրատարակեց մի կոչ՝ պրօֆ. Կուտափիքայի յօդուածի համ միասին, որով յայսնում էր բոյորին, թէ նոր—միջազգային լեզուն չէ գիտչելու ազգային լեզուներին, այլ ծառայելու է միայն միջազգային յարաբերութիւնների համար:

Այդ մասնաժողովի կարծիքով միջազգային լեզոն պէտք է ստեղծուի արհեստական ձևով, ճիշտ այն ծրագրով, ինչպէս որ առաջարկում է պրօֆ. Կուտափան: Երբեք հիմք պէտք է ծառային երգովական այժմեան լեզուները: Այդ նոր լեզուի բառարանը կազմելու համար նախալի պէտք է հաւաքի գիտական ու տեխնիկական այն բառերը, որոնք ընդհանուր են բոլոր լեզուների համար, օրինակ՝ ատօմ, ակսիօմա, բազ, թեմա, մեխանիկա, ֆիզիկա, մեկեղափ, բուֆետ, թատրոն, անանաս, չօկուագ և այլն և այլն: Դրանց վրայ պէտք է աւելացնել այն բառերը, որոնք ընդհանուր են ֆրանսերինի, գերմաներէնի և անգլիերինի համար, այն է elephant, familis, flamme, perle, person և այլն: Բացի զրանից՝ պէտք է օգտուել միատեսակ արմատներ ունեցող բառերից: Այդ բաւորից յետոյ կարելի է աւելացնել զակասած բառերը, ընտրելով ամենակարճերը և հեշտահընչիւնները:

Եյսպիսի խնամքով կզայտութեամբ կազմած լեզուն ընդհանուր առմամբ հասկանալի կը լինի զըսկթէ բոլոր ազգերի համար, ի հարկէ ժամանակի ըն-

թացքում կարելի է այդ միջազգային լեզուն աւելի մշակել ու կատարելագործել:

«Ընկանակած, ասում է պ. Լևսեվիչ իր յօդուածի վերջում, միջազգային լեզուի հարցը այսպիսի նոր հիմունքի դրայ դնելը և դիտական ընկերութիւնների ու յայտնի մասնագէտների աշխացութիւնը տալու են զրական հետեւանք, և գործնականապէս շահուելու է հարցը...»

«Միր Եօջի՞յ», փետրուար. «Խուսաց պատմորիւնը սօցիօրօդիական տեսակեցից»: Ծովածքածել անցեալը, քննել նրա պէս-պէս երկութները, գտնել զրանց պատճառներն ու հետևանքները, այդպիսով բացառընքաղաքան ու սօցիալական զանազան հոսանքները, բնորոշել զրանց կապացութիւնը և զրանցից որոշ եզրակացութիւնները ու բացարութիւնները գուրս բերել նաև ներկայի վերաբերմամբ—ահա սա է պատճութեան նպատակը ընդհանուր առմամբ: Բայց այդ նվասաց կին կարելի է ձգտել կամ սահմանափակ շրջանակով—պատմելով պատմական դէպքերը ժամանակադրական կարգով, ինչպէս այդ անում է՝ օրինակ՝ սուս պատճապիք ինօվայակին, կամ զրա հետ միասին քննելով նաև հիմքը, բոլոր սօցիալական-քաղաքական դէպքերը բուն պատճառներն ու փոխագարձեամբ ազգայութիւնը, ինչպէս այդ անում են այսպէս սասած՝ սօցիօրոգ պատճապիքները, օրինակ՝ Դանկէ, Լամպիկիս, Կարէկ, Վինօգրածօգ և այլն: Խսկալէս պատճութիւնը ի նկատի է առնում կատարուած որոշ փաստեր, որոշ դէպքեր—ուրիշ խօսքով սասած՝ կօնկրետ առարկաներ, հետևալու նա կօնկրետ զիտութիւն է: Սակայն այդ կօնկրետ փաստերը երբեք համապատասխան լուսաբանութիւն չեն կարող ստանալ առանց վերացուական մատածողութեան, ուրին միևնոյն ժամանակ պատճութիւնը և՛ վերացուական զիտութիւն է, ճիշտ այնպէս, ինչպէս և հոգեբանութիւնն ու կինսաբանութիւնը: Հոգեբանութիւնը քննում է առհաս-

բակ հոգեկան կեանքը իրեւ մի ամբողջութիւն, բայց այդ ամբողջութիւնը պարզելու համար նա որոշ փորձեր է կատարում կօնկրետ առարկան ների—կենդանիների վրայ, ուրին մի գերանութիւնը միևնոյն ժամանակ և՛ կօնկրէտ և՛ վերացուական զիտութիւն է: Այդ միևնոյնը կարելի է ասել կենսաբանութեան մասին, որովհետև նա մի տեսակ վերացուական հետևանք է, եղբակացութիւն է՝ կօնկրետ զիտութիւն-ներից՝ բաւարարանութիւնից գուրս բերուած: Այդպէս ուրին կօնկրետն ու վերացուականը իրար հետ լծրդելով միայն պատճութիւնը կարող է հասնել իր բուն նպատակին:

Հէնց գա է պատճառը, որ վերջին ժամանակներս առանձին շակրե են գործ գրում, որպէս զի պատճութիւնը հիմնուած կամ աւելի ճիշտն ասած՝ միշտ շաղկապուած լինի սօցիօրօգիայի հատ:

Խուսաց գրականութեան մէջ այդ ուղղութեամբ աշխատութիւններից առանձնապէս նշանաւոր է պրօֆ. Մելլիկօվի «Օչերք ոչը իշտորին ռուսկու կուլտուրայ» խորագրով ուսումնասիրութիւնը, որ լոյս տեսաւ մասմաս նախ «Միր Եօջի՞յ»-ի էջերում և ապա առանձին գրքերով:

Այդ միևնոյն ամսագիրը իր ներկայ համարից սկսել է պատճել նոյն ուղղութեան մի երկրորդ ուսումնասիրութիւն՝ «Օբզօր ռուսկոյ իշտորին տակուլուգական տեսակէտից» վերացրով, որ պատճառում է պրօֆ. Բօդկովի գրչին:

«Խուսաց ժողովրդի պատճութիւնը սօցիօրօգիական տեսակէտից ուսումնասիրելու հետեւանքն այն պէտք է լինի, ասում է հեղինակը իր առաջարանի վերջում, որ մենք կ'իմանակը մեր հայրենիքի անցեալն ու ներկան և կը հասկանանք նլա զարգացման հիմնական կանոնները: Եթէ զա ցնորդ չէ, այլ իրականութիւնը, եթէ երկակայու-

թեան կամ սխալի արդիւնք չէ, այլ ճշմարտութիւն, այն ժամանակ մենք պէտք է կարդանանք գոնչ մասնակի կերպով, քիչ օրոշ ձեռվ նախազուշակներ կ'եւ և՛ Խուսաստանի ապագան...»

Ուրեմն հեղինակի նպատակն է քըն-նել ուռաց անցեալ ու ներկայ պատ-մական-սօցիալական կեանքը և զրա հիման վրայ բնորոշել նրա ապագայ վիճակը:

Նա իր աշխատութիւնն սկսում է Ա-րդ դարից: Մենք նորից կը վերա-դառնանք այդ հետաքրքրաշարժ աշ-խատութեանը, երբ նա վերջանայ:

«Ինտեղիզենցիան կ' յեմուկրա-սիան Փրանսիացում...—Այդ վերնազր-ը տակ ե. Գեգենն աշխատում է բնորոշել զրականութեան ու գե-զարութեան զործիշների անտեսա-կան-սօցիալական վիճակը Փրան-սիայում. նա յիշում է մի շաբթ փաս-տեր, որոնք ցոյց են տալիս, թէ որ-քան հարուածներ է ստացել Փրան-սիական ինտելիցիենցիան XIX-րդ դա-րի ընթացքում, և զալիս է այն եղրա-կացութեան, որ այդ հարուածները առաջ են բերել որպէս հիմաթափումն, որից և տուժել է թէ զրականութիւ-նը և թէ գեղարութեալը:

«Եղեղարութեատագիտի վերաբեր-մունքը դէպի հասարակութիւնը, ա-սում է նա, նոյնն է, ինչ որ արդիւ-նազորութիւն և սպառողի յարաբերու-թիւնը: Նկարիշը նկարում է մի պատ-կեր, նրա մէջ զնում է իր ամբողջ հողին, մեծ գժուարութեամբ սալօնն է մացնում. բայց զատարկարան ու պճնազարդ ամբոխը անտարբերու-թեամբ անցնում է այդ պատկերի մօ-տից և կանգ է առնում մի որեէ տ-րիւնաներ անսարանի կամ մերկան-դամ գեղեցիւնու պատկերի առաջ, եւ հիմաթափուած նկարիշը մտածում է. «արժէ՝ արդեօք ապագանդ ունե-նալ, երբ մարդկիկ զրաւում են ան-շընորհ արտադրութիւններսով:»

Հեղինակը զրամա է զրում, աշ-խատում է նրա մէջ լուծել փիլիսոփա-

յական ու հասարակական «անիծուած» հարցերը, բայց հասարակութիւնը ձանձրանում է և թատրոն չէ յաճա-խում: Այն ինչ ամենայիմար պիեսը, որտեղ կանայք են դուրս զալիս, խուսն բազմութիւն է հաւաքւում թատ-րոնական դահլիճը: «Ահա թէ ինչով է զուարձանում ժողովուրդը», մտա-ծում է տարաբաղդ զրամատուրդը և հիսաթափում, վշտանում...»

Քրանիսիայի պատմական կեանքն էլ XIX-րդ դարի լնիթացքում շատ պատճառներ է տուել քաղաքական յո-ւնետեսութեան համար: Այդ յունե-սութիւնը առանձնապէս սաստկացել է 1848 թ. «արիւնանեղ կտտակեր-գութիւնից» յետոյ, երբ ժողովուրդը փորձեց իր ձեռքն առնել իր վիճակը, բայց կատարեալ ֆիասկօ կրցց... այդ ժամանակ կազմակերպուց Տենի սա-ռը սկսած իշխանը, այդ ժամանակ Թե-նանի նշմարեց զեմօկրատիայի յատ-կանիշները, որ և յետոյ պատկերացը-րեց Կալիբանի անձնաորութեան մէջ... 1870—71 թ. աղէտը մի նոր հա-րուած հասցրեց սամկավարական սկզ-բունքն և դրանով աւելի սստէկացը-րեց հասարակական մորի տատա-նումները: Այդպիսի սխուր տպա-ւորութիւնների աղդեցութեան տակ կրթութ սերոնդը զբուցեց ո-րոշ հիմունքից-համոզմունքից: Ֆլո-րեների, Գօնկուրների անդը բոնե-ցին Բուրժէ, Ալբեւո, Բարբոս և այլն: Դրանք իրանց սկսած իշխանը հասցը-րին այն սստիճանի, որ սկսեցին բա-ցանի զիտութիւնը, և նրանցից մի քանիսն ընկան միստիցիզմի մէջ, մի քանիսը հաւատացին, թէ կտթուի-կութիւնը փրկարար հեղինակութիւն ունի, իսկ միւներն էլ ուժեղ զդաց-մունք որոնելով՝ սկսեցին շարժել աղ-դայնութեան բութ սուրբ...»

Բայց զա ինտելիցիենցիայի առա-ջաւոր մասն էր, այն և ոչ ամբողջը: Բայց դրանից՝ Քրանսիայում կայ ին-տելիցիենտ ոյժերի մի մեծ բանակ, որ ինտելիցիենտ պրոլետարիատ կարող է կոչուել Պ. Դեղինը երկար կանգ է

առնում այդ բանակի վրայ, որպէս-
զի ցոյց տայ, թէ որքան շարքաշ կի-
ճակ է կրում նա, թէ որքան զըր-
կանքների է ենթարկում...

«Աներիկական սինդիկատները».—
Ցնաեսական մրցումը միշտ սիրում է
խոչոր ոյժեր, միշտ դրանց է տալիս
վիզնական յաղթանակը: Ընտ հինգ
դա է պատճառը, որ Սմերիկայում
այնպիսի արագութեամբ աճում են
սինդիկատները: 1897 թ. այդադր մի-
այն 63 սինդիկատ կազ, իսկ 1900 թ.
այդ թիւը հասաւ 185-ի: Միացած ոյ-
ժերով գործելու ձգուումը մի տևսակ
համանարտի է դարձել, որից վարա-
կուել են նշ միայն խոշոր, այլ և մանը
կապիտալիստներու ։ Զատ տեղերսում
սինդիկատներ են կազմել նոյն իսկ
մանրափառառները, մսագործները, ալ-
րագործները, անասնապանները և այն
և այլն: Մի խօսքով չիւսիսային Սմե-
րիկայում սինդիկատները աճում են
ճիշճա այնպէս, ինչպէս սունկը անձը-
րնեց յետոյ:

Սակայն այդ երկոյթը ցանկալի չէ
կտրող համարուել ժողովրդի մեծա-
մանութեան համար, որովհետ դրա
չնորհիւ դպալի շափով թանգանում են
ապրուստի ամենաանհրաժեշտ պի-
տոյքները:

Հասարակական կարծիքը բողո-
քում է այդ հոսանքի դէմ, և մամուլը
արձագանք է տալիս այդ բոլորին:
Պայքարը սուր կերպարանք է ստա-
ցել մահաւանդ Հասարակապետութեան
նախագահ Ռուզիկիլի ճառից յե-
տոյ, որով նա պաշտպանեց սինդի-
կատների հակառակորներին:

Սակայն հասարակութեան մի որոշ
մասը դէմ չէ սինդիկատներին, կամ
ինչպէս ասում է Փրանսիական «La
Revue» ամսագիրը՝ «միլիարդների
թագաւորներին», որովհետ դրանց
շարքում գտնուում են այնպիսի ա-
նուանի բարերարներ, ինչպէս օրինակ
Կարնեջին, բայց դրանից՝ նրանի մի
տեսակ հաճոյք է պատճառում այն
հանդամանքը, որ այդ թագաւորներին

մեծ մասը ժողովրդի ստորին խաւե-
րից են բարձրացել:

Որպէսզի ընթերցողը գոնէ մօտա-
ւոր գաղափար կազմէ այդ սինդիկատ-
ների մեծաթեան մասին, յիշենք որի-
նակներ. ութը յայտնի միլիարդաբերեր
միացել են, որպէս զի իրանց ձեռքը
զցեն Միացեալ նահանգների բոլոր
երկաթուիլիները, և դա գրեթէ իրա-
կանացած է Մի ուրիշ սինդիկատ
սեփականացը է պողպատի ամբողջ
արդիւնագործութիւնը, երբորդ սին-
դիկատը—ամրողջ նաւագնացութիւնը
օվկիանոսների վրայ ևայն ևայն:

Ուշադրութեան արժանի է այն
հանգամանքը, որ Սմերիկայի տնտե-
սական կեանքում արգէն նկատելի է
դարձել հետեւալ բնորոշ երկոյթը.
քանի կենտրոնանում-զօրեղանում են
կապիտալիստների ոյժերը, նոյնքան
աճում է նրանց հակառակը—սօցիա-
լիզմը: Հենց այդ պատճառով էլ ո-
մանք սինդիկատների աճումը մի
ցանկալի երկոյթ են համարում, ո-
րովհետև նա ուժեղ զարկ կը տայ սօ-
ցիալիզմին և դրանով կը շտապեցնէ
Կարլ Մարկսի նախատեսած տնտե-
սական ընդհարումը, որից յետոյ թա-
գաւորելու է սօցիալիզմը...

«Անգլիացիների բարժերը».—Լէզի
Գ. Բամսդենը «Nineteenth Century»-
ում զետեղել է մի յօդուած, որով աշ-
խատում է ցոյց տալ, թէ անգլիացի-
ների բարքերը զգալի կերպով վատա-
ցել են: 2ը նայելով արտաքին փայլին
ու զրաւութեանը՝ անգլիական հասա-
րակութեան կեանքը ներսից փչացած
է ու կոպիտ: Հեղինակի կարծիքով
անգլիական բարքերը առանձնապէս
վատացել են փերջին 30 տարիների
ընթացքում, երբ ոսկու երկրպագու-
թիւնը աւելի ու աւելի մեծ ծաւալ
ընդունեց, երբ հարստանալու ձբգ-
տումը նսեմացը ազնւութիւնն ու
անհատական արժանիքները...

Սակայն ուրիշ հեղինակներ քըն-
նելով նոյն հարցը՝ գալիս են այն եղ-
րակացութեան, որ փշացել են ոչ թէ

բոլոր անգլիացիները, այլ միայն մի
որոշ դասակարգ՝ փողային արխտօ-
կրատիան, այսպէս առած՝ զաւառա-
կան ազնւականութիւնը՝ «County
gentlemen»: Իսկ զըտ հիմնական
պատճառը եղել է կտակիտալիդմի ա-

բագ զարգացումը և նրանց սեփակա-
նութիւն կազմող հողերի սակաւ ար-
դիմարերութիւնը — երկրագործական
կրիզիսի պատճառով:

Ե. Թ.